ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/101

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Օրկա» ՍՊԸ-ի տնօրեն

Ա. Գրիգորյանի (պետական գրանցման վկայական թիվ 03Ա979465)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.06.2019թ. թիվ 26/10488-2019 գրությամբ «Օրկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը՝ պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 17.06.2019թ. թիվ 01.3/11/14890-19 գրության պատճենի հիման վրա, 21.06.2019թ. թիվ 26/10488-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Օրկա» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն)

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Օրկա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Օրկա» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/101 ընթացակարգի շրջանակներում 28.06.2019թ. ժամը 10:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով հայտնել է, որ Ընկերության մոտ առկա վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունը դրոշմանիշային վճարի մասով է՝ ավելացնելով, որ նույն ժամանակահատվածում աշխատել է նաև բանկում, որտեղ իր աշխատավարձից հաշվարկվել և պահվել է ամսական 1000 ՀՀ դրամ, որպես դրոշմանիշային վճար:

Ընկերության տնօրենը հայտնել է, որ վերը նշված փաստը հիմնավորելու համար ՍՑ-ՆԳ-2019/101 ընթացակարգի շրջանակներում կներկայացնի համապատասխան փաստաթղթեր:

3. **<u>ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ ոստիկանությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 17.06.2019թ. թիվ 01.3/11/14890-19 գրությամբ ներկայացրել է «Օրկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/101 ընթացակարգի շրջանակներում 28.06.2019թ. ժամը 10:55-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել ներկայացուցչի մասնակցությունը:

4. **<u>ՍՑ-ՆԳ-2019/101 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>**

ՍՑ-ՆԳ-2019/101 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Պատվիրատուի կողմից ՀՀ ոստիկանության կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՔԱՐՏ/2019» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով 02.06.2019թ. հայտ է ներկայացրել «Օրկա» ՍՊԸ-ն:

2. «Օրկա» ՍՊԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով՝ 2-րդ չափաբաժնի մասով, ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմում է 36 500 ՀՀ դրամ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.06.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ 2-րդ չափաբաժնի մասով «Օրկա» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

4. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 10.06.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Օրկա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 30 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.06.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Օրկա» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 21.06.2019թ. թիվ 26/10488-2019 գրությունը, ՀՀ ոստիկանության 17.06.2019թ. թիվ 01.3/11/14890-19 գրությունը՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների

գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ դրոշմանիշային վճարը զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով և չափով ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է, որի վճարման

պարտականությունը կատարվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չափով դրոշմանիշ գնելու միջոցով:

Նույն օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝

4. Եթե նույն ֆիզիկական անձն աշխատանքային պայմանագրով աշխատում է մեկից ավելի գործատուի մոտ, ապա այդ ֆիզիկական անձն իրավունք ունի սույն օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով և ժամկետներում դիմելու Հիմնադրամ՝ սույն մասում նշված՝ մեկից ավելի հիմքով վճարված դրոշմանիշային վճարը հետ ստանալու համար:

5. Սույն հոդվածի 2-4-րդ մասերով սահմանված դեպքերում Հիմնադրամը դրոշմանիշային վճարը վերադարձնում է սույն օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետներում:

«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները՝ ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունն է, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին:

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի ժե) պարբերության համաձայն՝ հարկային եկամուտներն են՝ դրոշմանիշային վճարները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ

առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն

ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

ՀՀ ոստիկանության կողմից կազմակերպված «ՀՀ Ո ՀԲՄԱՊՁԲ-ՔԱՐՏ/2019» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակից «Օրկա» ՍՊԸ-ն 02.06.2019թ. հայտ է ներկայացրել և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 05.06.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ 2-րդ չափաբաժնի մասով «Օրկա» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

«Օրկա» ՍՊԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով՝ 2-րդ չափաբաժնի մասով, ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմում է 36 500 ՀՀ դրամ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 10.06.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Օրկա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի <u>30 000</u> ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.06.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Օրկա» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

ՍՑ-ՆԳ-2019/101 ընթացակարգի քննության շրջանակներում Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկանք, համաձայն որի՝ «Օրկա» ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով առկա ժամկետանց պարտավորությունը՝ ***<u>30 000</u>*** ՀՀ դրամը, հանդիսանում է դրոշմանիշային վճարի մասով պարտավորություն:

Ընկերությունը ներկայացրել է նաև տեղեկանքներ, որոնց համաձայն՝ Արտյոմ Գրիգորյանը 01.02.2017թ.-առ այսօր հանդիսանում է «Օրկա» ՍՊԸ-ի տնօրեն, իսկ Տաթևիկ Գրիգորյանը 08.01.2019-28.02.2019թթ. աշխատել է «Օրկա» ՍՊԸ-ում՝ որպես մասնագետ: Արդյունքում «Օրկա» ՍՊԸ-ի դրոշմանիշային վճարի մասով պարտավորությունը 2017թ. փետրվարից- 2019թ. հունիս ժամանակահատվածում կազմել է 30 000 ՀՀ դրամ:

Միևնույն ժամանակ Ընկերությունը ներկայացրել է «Յունիբանկ» ԲԲԸ-ի կողմից 28.06.2019թ. տրված թիվ 1183 տեղեկանքը, առ այն, որ Արտյոմ Գրիգորյանը 01.10.2007թ.-ից առ այսօր աշխատում է «Յունիբանկ» ԲԲԸ-ում: 01.01.2017-31.05.2019թթ. ընթացքում վճարված աշխատավարձից հաշվարկվել և պահվել է ամսական 1000 ՀՀ դրամ, որպես դրոշմանիշային վճար: Ընդհանուր գումարը կազմել է ***29 000*** ՀՀ դրամ, որը փոխանցվել է «Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի» 900005001186 հաշվեհամարին:

Ներկայացրել է նաև «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի 22.07.2019թ. թիվ 4748-02 տեղեկանքը, համաձայն որի՝ Տաթևիկ Գրիգորյանը 23.08.2017թ.-ից աշխատում է «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ում: 23.08.2017-30.06.2019թթ. ընթացքում վճարված եկամուտներից հաշվարկվել և «Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ»-ին փոխանցվել է ***23 000*** ՀՀ դրամ դրոշմանիշային վճար:

Այսպիսով, «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝

4. Եթե նույն ֆիզիկական անձն աշխատանքային պայմանագրով աշխատում է մեկից ավելի գործատուի մոտ, ապա այդ ֆիզիկական անձն իրավունք ունի սույն օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով և ժամկետներում դիմելու Հիմնադրամ՝ սույն մասում նշված՝ մեկից ավելի հիմքով վճարված դրոշմանիշային վճարը հետ ստանալու համար:

5. Սույն հոդվածի 2-4-րդ մասերով սահմանված դեպքերում Հիմնադրամը դրոշմանիշային վճարը վերադարձնում է սույն օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետներում:

Հետևաբար հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության տնօրենը և աշխատակիցը միաժամանակ աշխատել են մեկ այլ գործատուի մոտ, որոնց համար արդեն իսկ աշխատավարձից հաշվարկվել և պահվել է ամսական 1000 ՀՀ դրամ որպես դրոշմանիշային վճար, ուստի գտնում եմ, որ նման պայմաններում Ընկերության վարքագիծը չի կարող գնահատվել որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի գտնում եմ, որ Ընկերությանը

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 21.06.2019թ. թիվ 26/10488-2019 գրությամբ «Օրկա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**